**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

14 մայիսի 2021 թվականի գյուղ Տեղ

**Մասնակցում էին** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 8 անդամներից՝

Սևադա Դանիելյանը
Համեստ Հակոբյանը
Արտակ Աղաջանյանը
Սիլվա Գալստյանը
Նարինե Ջհանգիրյանը
Սենիկ Փարսյանը

**Բացակայում էին** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու անդամներ՝

Մասիս Մկրտչյանը
Արգամ Լալայանը

**Մասնակցում էր** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը:

Հրավիրված էին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքի բնակիչներ:

**Նիստը վարում է** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը:

**Նիստի արձանագրումն ապահովում էր** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Բաղդագյուլյանը:

Նիստն սկսվեց ժամը 14.00-ին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի **ավագանին.**

1. **Լսեց Նիստի օրակարգի մասին:** Նիստը վարող Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը ներկայացրեց նիստի օրակարգի նախագիծը և առաջարկեց հաստատել այն: Այլ առաջարկություններ չեղան:

**Որոշեց (N 18)՝**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 14-ի նիստի հետևյալ օրակարգը.

1. **Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության խոշորացված համայնքների համար հայտարարված, ԿՈՎԻԴ համավարակով պայմանավորված դժվարությունների դիմագրավմանը միտված դրամաշնորհային ծրագրերի մրցույթին Տեղ համայնքի մասնակցությանը համաձայնություն տալու մասին,**
2. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու մասին**

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

2. **Լսեց՝ Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության խոշորացված համայնքների համար հայտարարված, ԿՈՎԻԴ համավարակով պայմանավորված դժվարությունների դիմագրավմանը միտված դրամաշնորհային ծրագրերի մրցույթին Տեղ համայնքի մասնակցությանը համաձայնություն տալու մասին,**

**(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)**

**Որոշեց (N19)՝**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքին մասնակցելու Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ ԿՈՎԻԴ համավարակով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու համար հայտարարված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու և այդ նպատակով Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից համայնքներում տնտեսական զարգացմանն ուղղված փոքր և միջին ծրագրերը իրականացնելու նպատակով համայնքներին տրամադրվող դրամաշնորհ ստանալու համար:
2. Հավանություն տալ Տեղ համայնքի կողմից սույն որոշման 1-ին կետով ծրագրի մասնակցության շրջանակներում համայնքապետարանի կողմից ընտրված «Համայնքային զարգացման կենտրոնի հիմնում» և «Կարի արտադրամասի ընդլայնումը որպես Տեղ համայնքի տնտեսական զարգացման բաղադրիչ» ծրագրերին:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6. դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

3. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու մասին**

**(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)**

**Որոշեց (N20)՝**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ և 3-րդ մասով ու 67-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ համաձայնություն աճուրդ-վաճառքի ձևով օտարելու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը.
   1) ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գյուղ Տեղ Արցախի խճուղի թիվ 2/3 հասցեում գտնվող /նպատակային նշանակությունը՝ <<արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության>>, գործառնական նշանակությունը՝ <<գյուղատնտեսական արտադրական օբյեկտների>>/, 1050,0 ք.մ. հողամասը (վկայական 11052021-09-0037, ծածկագիր՝ 09-101-0124-0057)՝ 540750(հինգ հարյուր քառասուն հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ սպանդանոց կառուցելու նպատակով,
   2) ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գյուղ Տեղ Արցախի խճուղի թիվ 12/6 հասցեում գտնվող /նպատակային նշանակությունը՝ <<բնակավայրերի>>, գործառնական նշանակությունը՝ <<հասարակական կառուցապատման>>/, 78,5 ք.մ. հողամասը (վկայական 11052021-09-0054, ծածկագիր՝ 09-101-0031-0050)՝ 41000(քառասուն մեկ հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ առևտրի սրահ կառուցելու նպատակով:
2. ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1)
Ձեռնպահ է քվեարկել ավագանու անդամ Սևադա Դանիելյանը:

Օրակարգի բոլոր հարցերն սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 15.30-ին:

**Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի**
**Տեղ համայնքի ավագանու անդամներ՝**

| | | |
|---|---|---|
| 1 | | Սևադա Դանիելյան |
| 2 | | Սիլվա Գալստյան |
| 3 | | Արտակ Աղաջանյան |
| 4 | | Համեստ Հակոբյան |
| 5 | | Նարինե Ջհանգիրյան |
| 6 | | Սենիկ Փարսյան |

**Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի**
**Տեղ համայնքի ղեկավար՝** ***Ներսես Շադունց***